

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

համայնքային ծառայության բնագավառում 2014 թվականին կատարած
աշխատանքների վերաբերյալ

Համայնքների աշխատակազմերում զբաղվածների թվաքանակը՝ 1333, որից համայնքային ծառայության պաշտոնների թիվը 565-ն է, որից 102-ը՝ գլխավոր, 127-ը՝ առաջատար, 336-ը՝ կրտսեր պաշտոններ:

Համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի նկատմամբ իրականացվել է պատշաճ վերահսկողություն և արդյունքները ժամանակին ներկայացվել են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն:

<<Հայաստանի համայնքների ասոցիացիա>> ՀԿ -ի կողմից ներկայացված ծրագրով վերապատրաստման ենթակա 187 համայնքային ծառայողներից վերապատրաստվել են աշխատակազմերի թվով 180 համայնքային ծառայողներ և ստացել որակավորման համապատասխան տեղեկանքներ: 7-ը գտնվում են երեխայի խնամքի արձակուրդում:

Վերոնշյալ կազմակերպության կողմից օգոստոսի 19-ից 29-ը անցկացվել է համայնքներում գնումների գործընթացն իրականացնող թվով 71 համայնքային ծառայողների վերապատրաստում:

Համաձայն ժամանակացույցի ընթացիկ տարում հայտարարվել և անցկացվել է 66 մրցույթ, որից կայացել է 58-ը, 2-ում հաղթող չի ճանաչվել: Չի կայացել 8-ը՝ դիմող չլինելու պատճառով:

Ապահովվել է համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը. սահմանված ժամկետներում հայտարարությունները տեղադրվել են ցուցատախտակների վրա, մարզպետարանի ինտերնետային կայքում և Azdarar.am կայքում:

Սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների ժամանակացույցերը, ձեռնարկվել են միջոցներ համայնքներում կադրային

գործի վարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ՝ համաձայն տարածքային կառավարման նախարարության տրամադրած ուղեցույցի: Արդյունքների մասին պարբերաբար տեղեկացվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը:

Ընթացիկ տարում անցկացվել է համայնքային ծառայողների 129 ատեստավորում, որից չեն մասնակցել 11 համայնքային ծառայողներ, իսկ պաշտոնին չի համապատասխանել 6-ը, որոնք օրենքով սահմանված կարգով ազատվել են աշխատանքից:

Սույն թվականի հոկտեմբեր - նոյեմբեր ամիսներին ՀՀ Կառավարման ակադեմիայի կողմից նախապես ներկայացված ծրագրով մարզպետարանի դահլիճում իրականացվել է ՏԻՄ – երի հերթական վերապատրաստման դասընթացները, որին մասնակցել են թվով 75 ՏԻՄ ներկայացուցիչներ և ստացել համապատասխան վկայականներ:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 26-ի N 05-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգի համաձայն, առանձնակի ուշադրության է արժանացել մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների, այդ թվում՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև պաշտոնից ազատված անձանց վերաբերյալ գրանցամատյանները (Ձև1, Ձև2) սահմանված ժամկետներում և պատշաճ լրացված վիճակում ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը տրամադրելու գործընթացը: Այդ ուղղությամբ աշխատակազմերին ցույց է տրվել մեթոդական ու խորհրդատվական օգնություն և առաջարկվել է սահմանված կարգով լրացնել գրանցամատյանները, պարբերաբար թարմացնել դրանցում առկա տվյալները և փոփոխությունների դեպքում ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

ՏԻ և ՀԳՄ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ